

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ
МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION
AND SCIENCE
MINISTER

0010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, Главный проспект, Дом правительства 3, 0010, Main Avenue, Government House 3, Yerevan, E-mail: minister@edu.am, www.edu.am

№ 21-01/07 «30.05» 2007

<<Մայքրոսոֆթ>> ընկերության <<Նորարար դպրոցներ>>

ծրագրի հանձնաժողովի անդամներին

Երաշխավորում եմ <<Օհանյան>> կրթահամալիրի մասնակցությունը <<Մայքրոսոֆթ>> ընկերության կողմից իրականացվող՝ <<Նորարար դպրոցներ>> ծրագրին: Այս կրթահամալիրը իր հիմնադրման օրվանից իրականացնում է կրթական բովանդակային և կառուցվածքային բարեփոխումներ, ներդնում է ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ՝ դրանք համապատասխանեցնելով հայաստանյան կրթական համակարգի պահանջներին:

<<Օհանյան>> կրթահամալիրը հանրապետությունում հայտնի է որպես առաջատար կրթական հաստատություն, որն իր գործունեության ընթացքում միշտ մասնակից է եղել տարբեր սեմինարների, աշխատաժողովների, համաժողովների, ձեռք բերած նորարարական փորձը հաղորդելով ինչպես մասնավոր, այնպես էլ պետական դպրոցներին:

Կրթահամալիրում ղեկավարության, ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև առկա են ջերմ և հարգալից փոխհարաբերություններ, որի շնորհիվ ձևավորվում է յուրահատուկ աշխատանքային մթնոլորտ:

Երաշխավորում եմ «Օհանյան» կրթահամալիրի մասնակցությունը «Մայքրոսոֆթ» ընկերության «Նորարար դպրոցներ» ծրագրին՝ համոզված լինելով, որ ստացած միջազգային փորձն ու տեղեկատվությունը, լրացուցիչ նորարարական գաղափարները և ծրագրերը հաջողությամբ կօգտագործվեն կրթահամալիրում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ



Ա.ԱՇՈՏՅԱՆ